

Թաղեցւոյն ընդհանուր լեզուն տաճկերէն է, իսկ աղքատներունը հայերէնով խառն տաճկերէն:

Գինետուն յաճախողները մեծ մասամբ աղքատ են եւ մոլի. իրենց սովորութիւնն է ժամը չորսին տուն դառնալ: Հարուստները չեն երթար գինետուն եւ չերթալու ալ պատճառ ունին. վասնզի գինետուններն իրենց տուններնուն մէջ փոխադրած են: Այս թաղին թէ՛ հարուստն եւ թէ՛ աղքատն ընդհանրապէս ուտելու, խմելու, պառկելու եւ քնանալու համար միայն աշխարհ եկած կը կարծէ զինքը:

Հոս կրնակի Պ. Խաչատուր Միսաքեան, որուն գործերուն հրատարակութեանը կսպասէ դեռ ազգն:

Հոս կրնակեր Փունջ լրագրի խմբագիր Պ. Համբարձում Ալաճաճեան, որ իւր թերթը շաբաթն երկու անգամ հրատարակել բաւ կը համարի ազգին ծառայելու համար:

Այս թաղն նոյնն է այսօր՝ ինչ որ էր հարիւր տարի առաջ. եւ եթէ երիտասարդութիւնն թաղին գործերուն ձեռք չերկնցնէ՝ երկու դար ալ այսպէս կ'երթայ: Ուստի Սելամսըզցիին կ'իյնայ, որ շաբաթը մէկ անգամ հսկում ընէ իւր դրացւոյն համար:

Շատերը կ'անդեն, թէ եթէ Եննի մահալլեցիք քանի մը շաբաթ ուրիշ գեղ մը փոխադրուին օդափոխութեան համար՝ թաղին օդը կ'փոխուի եւ թաղեցին ալ իւր կարծիքներուն մէջ փոփոխութիւն զգալով՝ քիչ մը կարթննայ քունէն:

Տեղւոյս քարոզիչն է Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, որ եպիսկոպոսանալու համար *Ղալաթիոյ օճախը* գործիք եղած է ժամանակաւ, եւ իւր ձեռներէն բռնելով քալեցնող Հայրիկն տապալելու աշխատած է զիշեր ցերեկ... Թերեւս օր մը արդարանար այս մարդն, եթէ աշխատակից չլինէր այնպիսի խմբակի մը, որ իրեն անձնական շահուն համար կ'գործէ միայն: Արդեօք պատրիարք ըլլալու համար զո՞վ պիտի մատնէ այս կրօնաւորը...:

**ԺԳ.**

**ԲԷՐԱ**

Բերայի սահմանն է արեւելքէն խաղամուկութիւն, արեւմուտքէն պճնասիրութիւն, հարաւէն շոայլութիւն եւ հիւսիսէն խարդախութիւն:

Ա՛լ ասանկ սահմանակիցներ ունենալէդ ետքը հանդարտ սրտով կեանք անցո՛ւր: